Աննա Սարգսյան

Խաչաձեւ սեր

Երբ տենչանքն՝ անխոս, բայց լեզու առած,
Մի չարաճճի մանուկի պես խենթ,
Ստվերում է քո անդորրը կյանքի,
Ողողում սիրով, թվացյալ եւ կամ
Իրական, սակայն անհաս թվացող,
Դու ձեռքդ մեկնիր ու մի ընկնկիր,
Առ նրան քո գիրկն իբրեւ մի ընծա,
Որ հոգիդ նորեն հուզմունքից ցնծա:
Թե վարանես էլ, վայրկյան իսկ զղջաս՝
Անոթներն արյան չեն տա ընտրություն,
Այդժամ իրենք են տերը հույզերի,
Այլ ոչ թե մենք, եւ ոչ իմաստությունն:
Բույրն ամենակալ որսորդն է սրտի,
Նա՛ է տիրակալ, որսում է անզեն,
Դիպուկ է նետում, ձեռքը անվարան,
Խոցում է մեկեն, մեզ դարձնում խարան:
Գիտե՞ք, կան ձայներ, որ բնավ երբեք
Չեն խաթարում մերկ լռությունը,
ՈՒ կա լռություն, որ ճիչ է թվում,
Այնքա՜ն լեցուն է, այնքա՜ն բեկբեկուն…

Երեւան
30.11.2019թ.